ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթները կիրառված են թիվ ՎԴ/1614/05/08 և ՎԴ/1928/05/08 վարչական գործերով կայացված դատական ակտերով: ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/1614/05/08 գործով 01.08.08թ. վճիռը կայացվել է «Ընտրական իրավունքի պաշտպանության դիմում-բողոքների քննարկման կարգի խախտմամբ ԿԸՀ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և վերջինիս կողմից համապատասխան բարենպաստ վարչական ակտ ընդունման պարտավորեցնելու մասին» վերաբերյալ հայցադիմումի առնչությամբ, իսկ ՎԴ/1928/05/08 գործով 01.08.08թ. վճիռը՝ «ՀՀ Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքների ամփոփման սահմանված կարգի խախտմամբ ԿԸՀ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին» հայցադիմումի առնչությամբ:

2. Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 27 հոդվածի՝ թեկնածուի վստահված անձը կոչված է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում ներկայացնելու թեկնածուի շահերը: Նշված հայցադիմումների բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ

կայացված դատական ակտերը վկայում են, որ վերոհիշյալ վարչական գործերի շրջանակներում վստահված անձ Ռ. Թորոսյանը հանդես է եկել ոչ թե իր՝ որպես քաղաքացու կամ վստահված անձի շահերի պաշտպանությամբ, այլ ՀՀ Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի շահերի, մասնավորապես, նրա ընտրվելու իրավունքի պաշտպանությամբ: Հետեւաբար, այդ վարչական գործերով կայացված դատական ակտերը վերաբերում են Լ. Տեր-Պետրոսյանի իրավունքներին ու շահերին եւ իրավական հետեւանքներ են առաջացնում նրա, եւ ոչ թե քաղ. Ռ. Թորոսյանի համար: Ուստի նշված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերի առնչությամբ կայացված դատական ակտերով կիրառված դրույթների սահմանադրականությունը չի կարող վիճարկվել քաղ. Ռ. Թորոսյանի կողմից քանի որ նշված դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն գործի քննությունը մերժվում է, եթե դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝ Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղ. Ռ. Թորոսյանի դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱ-ՐՈՒԹՅՈՒՆ